## 60. ԴԵՎԸ

Ընում ա, չընում մին մարթ, մին կընեգյ։ Ընդրանց ընում ա իրեք ախճիգյ։

Էդ ըխճըկերքը օղում ըն քյինաներ մոշ քաղեն։ Կուճուր քերը շատ ա լաց ընում։ Յոր ըն օնում ընդրան մին վրեղե պուլիգյ տամ, տական ծակ։

Իրեքավ քյընամ ըն մոշ քըղելի։ Ուրանց ըմբոններն լըցած տոն ըն կյամ, ամմա կուճուր քըվերը ըմանեն մեչին մոշ չի ընում։ Սաբարը վեր քաղած մոշը ծակավը վեր ար տեռալ։

Քըվերքը վար տոն ըն հըսնում, մթենը վեր ար կոխում, ամմա կուճուր քերը մնացալ ար հանդումը։ Լաց ար ընում։

Ընդրա առաչը մին դև ա տուս կյամ։

Դեն ասըմ ա, — Քյըեզ ուտլական ըմ։

Ախճիգյը տանում ա տինում փրշերեն տակեն, ինքյը քյընամ ա կրակ պիրի, նի կըցնե փրշերը, ըխճըկանը խրավե, ետնան օտե։

Նա վար քյինամ ա, ախճիգյը լաց ա ընում, ասըմ. — Ա՜յ ասթխեր, ա՜յ լուսընգյա, ա՜յ քոլեր, ա՜յ սարեր, ինձ էտ դևան աղաղ ըրեքյ, ըղըդեցեքյ։

Չելը դևեն կյալը ախճիգյը տուս ա կյամ, մին թաՀրավ էտ փրշերեն տական, փախչում շենը։ Դևը կյամ ա, վար ըխճըկանը օտե, տեսնում ա ախճիգյը կա վեչ։

Շատ ա կըզնվում, մթկումն ասում ա. «Յա ընդրան պիտի քը-

թենամ օտեմ, յա օրըս օր չի ընելու, վըրդեղան վերե յա, պիտի քը-թենամ»։

Ուրերան մին օր էտ ըխճըկանը տոնը մին ղոնաղ ա կյամ։ Կուճուր ախճիգյը ընրան դաստի ճնանչում ա։ Դևն ա ընում։

Դևը էտ օրը օղում ա ղոնաղ մընա։ Կուճուր ախճիգյը մորն ասում ա. — Ա՛ մար, էտ մարթին ղոնաղ մե՛լ ընթունել։

Հաՙրը լըսում ա, յրան կըղնըվում, ասում. — Կանուխ պիտիր մըծացած, վար մըեր տանը ղունուղներեն ետ տաս։

Ախճիգյը վեշ մինին ասում չի, թա նա հու վա՞։

Վար մըթնում ա, լոխ հաց ըն օտում, քոն ընում, էտ ղոնաղեն քըշտեն աղու տեղ ա ընում, էտ տեղավը լոխճին քընավ ա անում, թողում մինաՙկ կուճուր ըխճըկանը։

Էտ դևը տոՙս ա կյամ տոՙնը, ուշաղեն յրա տինում մին մեծ ղազան, մին խիլլաՙ եղ ա նի ածում մեչը, ղազանեն տակը նի կըցընում։

Վար եղը սկսում ա ճըլճըլալը, եր ա կըցընում ըխճըկանը՝ ասում. — Շորերըտ հանե, վար ղըզանումը քյըեզ պիդի տըպակեմ՝

Ախճիգյը ըղաչանք-պըղատանք ա անում դևեն, ասում. — Դե՞ ինձ ուտլականը-ուտլական ըս, լհաՙ թող քյընաՙմ մին կոլա ճուր պի-րիմ, մըեր ախպուրը մին էլ տըեսնամ, ետնան կեր։

Դևը «հա» յա ասում։

Էտ ախճիգյը ճըրին յրա սոՙքյ ա ասում, ետնան էն ղաՙշանգյ Ղարարաղեն սըրերեն յիշիլավ ասում ա. — Ա՛յ սարեր, ա՛յ կընընչ-կյիրմիրին տվող հաՙնդեր, քոլեր, ա՛յ նախշուն ասթխեր, ինձ ըզը-դեցեքյ դևին անա։

Տըյերան մին յըղոնիգյ մին թեփուռ ա վեր քըցում, ասում. — Ա՛յ աղճիգյ, ա՛յ սըվարախտ, էս թեփուռը եր կալ, տար քու մոր, քու հոր աշկերը քըսի, վար զուրթնաՙնաՙն, քյըեզ ըզադեն։

Ախճիգյը կոլան նան յըղոնիգյեն թեփուռը յոր ա օնում, կյամ տոն, ամմա թեփուռը կյեղում ա։

Էտ դևն ասում ա. — Բեշիթ ըրա, կը լուսաՙնաՙ։

Էտ աղճիգյն ասում ա. — Գյուդում ըմ, վար ինձ ուտլական ըս, թող քյընաՙմ ծընողներես պաչիմ, ետնան կեր։

Դևն ասում ա. — Քյինաՙ։ Մինաՙկ կանուխ եք։

Ախճիգյը մորը, հորը իրեսան պաչում ա, թեփուռը նահանց աշկերն ա քըսում։ Հաՙրը, մարը ըիրդաՙն աշկերնեին պեց ըն անում։

Ախճիգյն ասում ա. — Եր կացաք, տեսաք չոլումը հի՞նչ ա կըդարվում։

Նահանք եր ըն կենում, տեսնում մեծ ղազանը կրակեն տըրած, եղը մեչին ճըլթճըլթում ա։

Հաՙրը էտ դևին նհետ կռև ա անում, ընրա կլՙոխը կտրում, քցում ղըզղանեն մեչը, ետնան ասում. — Տու ուզելիս ըս ըլՙալ օրիշին տհենց անիս, տու ղըղվեցեր։

Ջարր՝ ընդեղ, պարին՝ ըստեղ։